Ձև- N 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետեւյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

Երթուղու					
Հ/հ	համարը	սկզբնակետը (ավտոկայան ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	վերջնակետը ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	տեսակը (ավտոբուս/ միկրոավտո-բուս)	սպասարկման համար պահանջվող տրանս.միջոցի թիվը (ներառյալ պահուստային)
1	05-022	Ալավերդի	Ստեփանավան	ավտ.	2
2	05-023	Ալավերդի	Օձուն	ավտ.	2
3	05-024	Ալավերդի	Ծաթեր	ավտ.	2
4	05-025	Խնկոյան	Վանաձոր	ավտ.	2
5	05-045	Վանաձոր	Գուգարք	ավտ.	4
6	05-046	Մարգահովիտ	Վանաձոր	ավտ.	2
7	05-047	Լերմոնտովո	Վանաձոր	ավտ.	2
8	05-048	Ֆիոլետովո	Վանաձոր	ավտ.	2
9	05-049	Գոգարան	Վանաձոր	ավտ.	2
10	05-050	Կաթնաջուր	Վանաձոր	ավտ.	2
11	05-058	Ալավերդի	Թեղուտ	ավտ.	2
12	05-059	Սարամեջ	Վանաձոր	ավտ.	2
13	05-020	Աքորի	Ալավերդի	ավտ.	2
14	05-021	Հագվի	Ալավերդի	ավտ.	2
15	05-039	Տաշիր	Նորաշեն	ավտ.	2
16	05-060	Ձորագյուղ	Վանաձոր	ավտ.	2
17	05-061	Վանաձոր	Նոր Խաչակապ-Քարաձոր	ավտ.	2
18	05-062	Անտառաշեն	Վանաձոր	ավտ.	2
19	05-063	Հաղպատ	Ալավերդի	ավտ.	2
20	05-064	Տաշիր	Պրիվոլնոյե	ավտ.	2
21	05-065	Տաշիր	Պաղաղբյուր	ավտ.	2
22	05-066	Արծնի	Ապավեն-Տաշիր	ավտ.	2
23	05-067	Տաշիր	Ձորամուտ-Գոգավան	ավտ.	2
24	05-068	Տաշիր	Ձյունաշող	ավտ.	2
25	05-001	Ալավերդի	Վանաձոր	մ/ավտ.	2
26	05-008	Թումանյան	Ալավերդի-Վանաձոր	մ/ավտ.	2
27	05-010	Մեծավան	Վանաձոր	մ/ավտ.	2
28	05-013	Վանաձոր	Շահումյան	մ/ավտ.	6
29	05-014	Սպիտակ	Վանաձոր	մ/ավտ.	2
30	05-015	Վանաձոր	Այրումի խճի գործարան	մ/ավտ.	2
31	05-017	Շիրակամուտ	Սպիտակ-Վանաձոր	մ/ավտ.	2
32	05-021	Սարչապետ	Վանաձոր	մ/ավտ.	2
33	05-022	Լեռնահովիտ	Վանաձոր	մ/ավտ.	2
34	05-023	Շնող	Վանաձոր	մ/ավտ	2
35	05-019	Օձուն	Ալավերդի	մ/ավտ.	2

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղեւորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3.Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսների ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6.Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման եւ վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման եւ բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը եւ հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաեւ ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը եւ պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղեւորի եւ ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային եւ ներմարզային երթուղիների համար՝ նաեւ ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից.կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված եւ ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված եւ իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, իսկականի հետ ճիշտ է գրառմամբ եւ ստորագրությամբ,իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ եւ ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթը տեղի կունենա 2011թ. նոյեմբերի 30-ին Ալավերդի քաղաքում եւ դեկտեմբերի 1-ին՝ Վանաձոր քաղաքում, սկիզբը՝ ժամը 1000-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրասնպորտի եւ ճանապարհաշինության բաժին, 406 սենյակ՝ աշխատանքային օրերին եւ ժամերին:

Հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2011թ. նոյեմբերի 24-ը, ժամը 1800:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 2-03-91:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողով